Դասի թեման՝ «Ապահով համացանց»

Դասի նպատակը Համակարգված գիտելիքների տրամադրումն է համացանցի և արդյունավետ օգտագործման մասին: Օգնել աշակերտներին ճիշտ և անվտանգ որոնում կատարել:

1) Համացանցի օգտագործման հնարավորությունների վերաբերյալ սովորողների գիտելիքների մակարդակի բարձրացում

Համացանց.

- Հետաքրքիր և օգտակար ինֆորմացիայի ստացում:
- Շփում և հաղորդակցում:
- Լայն հնարավորություններ սովորելու համար:

2) Համացանցի օգտագործման ժամանակ հնարավոր վտանգների վերաբերյալ սովորողների գիտելիքների մակարդակի բարձրացում.

- Վիրուսների ներթափանցում համակարգիչՎիրավորանքներ այլ օգտագործողների կողմից:
- Համացանցում անձնական ինֆորմացիայի տեղադրման արգելք:
- Խաբեբայության հնարավորություն:

3) Աշակերտների կողմից համացանցից անվտանգ օգտվելու կանոնների յուրացում:

4)Ծանոթացնել www.safe.am և handbook.ktak.am կայքերին:

Կահավորում.
Պրոյեկտոր, անհատական համակարգիչներ:

Դիդակտիկ նյութեր. Պատի թերթեր, Գունավոր թղթեր, PowePoint պրեզենտացիա:

Դասի ընթացքը

- *Նախապատրաստական մաս, դասի նպատակը -3 րոպե*

Ժամանակակից աշխարհը դժվար է պատկերացնել առանց համացանցի: Տրամադրելով անսահման և աննախադեպ հնարավորություններ, համացանցը պարունակում է նաև բազմաթիվ վտանգներ՝ հատկապես երեխաների համար:

Համացանցը և **Համաշխարհային Ոստայն** հասկացությունները շատ հաճախ նույնացվում են, սակայն դրանք հոմանիշներ չեն: *Համացանցը* գլոբալ ցանցերի միավորում է, իսկ *Համաշխարհային սարդոստայնը* համակարգ է, որը հնարավորություն է տալիս օգտվել համացանցին միացված համակարգիչներում պահպանվող էլեկտրոնային փաստաթղթերից:

Բանաստեղծություններ և երգեր համացանցի վերաբերյալ-10 րոպե

Բեմականացում «Ապահով համացանց» -10րոպե

Համացանցին առնչվելու անվտանգությունը և էթիկան - 10 րոպե

- ✓ Առանց ծնողների թույլտվության որևէ անձնական ինֆորմացիա (նշանաբան,անուն-ազգանուն,հեռախոսի համար,հասցե,դպրոցի համար և այլն) մ'ի հայտնեք համացանցի ձեր նոր ծանոթներին:

- ✓ Եթե շփոթեցնող ինֆորմացիա եք ստանում կամ հայտնվում եք երկընտրանքի առջև՝ մի՛ փորձեք ինքնուրույն գլուխ հանել. դիմեք ծնողների կամ ուսուցիչների օգնությանը:

- ✓ Համացանցում ծանոթացած նորահայտ անձի հետ իրական կյանքում հանդիպելը լավ գաղափար չէ, բայց եթե, այնուամենայնիվ, որոշել եք հանդիպել նրան, ապա գնացեք ծնողների հետ:

- ✓ Մի բացեք այն էլեկտրոնային նամակը, ֆայլը կամ WEB էջը,որը ստացել եք անհայտ կամ վստահություն չներշնչող անձից:

- ✓ Բացի ընտանիքի անդամներից՝ ոչ մեկին մի վստահեք ցանց մուտք գործելու ձեր նշանաբանը. դա հետագայում կարող է տհաճությունների կամ նույնիսկ փորձանքի հանգեցնել:

- ✓ Մշտապես պահպանեք համացանցային անվտանգության կանոնները. դրանք ստեղծվել են, որպեսզի ցանցում ձեզ անվտանգ և անկաշկանդ զգաք:

- ✓ Էլեկտրոնային հաղորդակցության ընթացքում բարեկիրթ եղեք. չէ՞ որ նույնը սպասում եք հաղորդակցից:

- ✓ Համացանցում աշխատելիս սովորեք հարգել այնտեղ ընդունված օրենքները. դրանք կարող են տարբեր լինել՝ կախված հաղորդակցման միջավայրից: Հարգանքով վերաբերվեք այն մարդկանց ժամանակին, ում հետ հաղորդակցվում եք: Հիշեք,որ ցանցային ժամանակը ոչ միայն սահմանափակ է, այլև շատերի համար՝ թանկ:

- ✓ Հետևեք ուղղագրության և քերականության կանոններին:

- ✓ Հարգեք գիտակների խորհուրդները և ինքներդ էլ գիտելիքներով օգնեք այլոց:

- ✓ Եթե բանավեճի ընթացքում կրքերը բորբոքվել են, ապա վարվեցողության թույլատրելի նորմերը չխախտեք նույնիսկ այն դեպքում, երբ դիմացինը ձեզ դրդում է դրան:

- ✓ Անկախ նրանից, թե այլոք պաշտպանո՞ւ են ցանցում հաղորդակցվելու էթիկայի կանոնները՝ դուք անշեղորեն հետևեք դրանց:

➢ Քննարկումներ հետևալ հարցերի շուրջ – 12 րոպե

1. Ո՞ր տարիքից կարելի է համացանց մտնել:

2. Կարող ենք արդյոք ունենալ անձնական էլեկտրոնային հասցեն, ստեղծել բլոգներ կամ գրանցվել սոցիալական ցանցերում

3. Ի՞նչ տնային կանոններ պետք է սահմանել համացանցի օգտագործման համար:
4. Որ տարիքից օգտագործել Ակնթարթային հաղորդակցման ծրագրերը:

5. Կարո՞ղ եք արդյոք մեծահասակները կարդալ մեր հաղորդագրությունները:

6. Արդյո՞ք վեբ-խցիկները հուսալի են:

7. Ինչ է համացանցային կախվածությունը:

8. Ի՞նչ պետք է իմանալ համակարգչային վիրուսների մասին:

9. Ի՞նչ պետք է անել, երբ անհանգստացնում են համացանցում:

10. Արդյո՞ք օգտակար են ֆիլտրող ծրագրերը:

Ուսուցչուհի՝ Ա. Խաչատրյան

Կարմիրգյուղի թիվ 1 միջն. Դպրոց 8-րդ դասարան